ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«13» 02 2014 թ.

Հ-174

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան Ձեր 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 02/12.15/19939-13 գրության՝ ուղարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

010-3092
13 02 2014

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերնագրում և երկրորդ պարբերությունում «մուտքի արտոնագրի» բառերը փոխարինել «մուտքի վիզայի» բառերով, քանի որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է «արտոնագիր կամ մուտքի վիզա» հասկացությունը:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև համաձայնագրի նախագծի վերնագրին:

2. Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի համաձայն ՀՀ քաղաքացիների համար անցագրային գործող փաստաթուղթ է համարվում նաև դիվանագիտական անձնագիրը՝ կենսաչափական տվյալներով, սակայն կենսաչափական տվյալներով դիվանագիտական անձնագրեր առայժմ չեն կիրառվում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել և անհրաժեշտության դեպքում հանել «դիվանագիտական անձնագիրը՝ կենսաչափական տվյալներով» բառերը:

Մոլդովայի Հանրապետության քաղաքացիների համար անցագրային փաստաթղթեր են համարվում նաև օդանավի թռիչքային անձնակազմի անդամության վկայականը, ծովային անձնագիրը և մեքենավարի վկայականը: Սակայն ՀՀ քաղաքացիների համար վերոնշյալ անցագրային փաստաթղթեր նախատեսված չեն արտասահման ուղևորվելիս:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել և անհրաժեշտության դեպքում հանել կամ վերոնշյալ անցագրային փաստաթղթեր նախատեսել նաև ՀՀ քաղաքացիների համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ-ում ծառայողական անձնագրեր՝ կենսաչափական տվյալներով, չեն կիրառվում, ինչպես նախատեսվում է համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Վիրաբյան